



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը, ինչպես նաև *Թ. Բարսեղյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Թադևոս Բարսեղյանին* տրամադրել 2019 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր, 2019 թվականի հունվարի 21-ից մինչև փետրվարի 25-ը ներառյալ:

2. *Թադևոս Բարսեղյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Սարալանջի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության կենսաբանության ուսուցիչ *Նաիրա Քերոբյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2019 թվականի հունվարի 21
ք. Հրազդան
N 7-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

